

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՄՂՄԱՆ ՄԻՏՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

3. Լ. ԶԱՔԱՐՅԱՆ

Գիտականորեն հիմնավորված լեզվաքաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ պայման է ինչպես համընդհանուր, այնպես էլ տվյալ լեզվում գործող զարգացման միտումների բացահայտումը և հաշվի առնելը կանոնարկման և լեզվաշինական աշխատանքներ կատարելիս:

Ինչպես նկատել են տեսաբանները¹, ժամանակակից հայերենում բազմաթիվ այլ միտումների շարքում գործում են երկու հակադիր և միմյանց լրացնող միտում՝ ժամանակակից կյանքի ու մշակույթի՝ գիտության, արվեստի, մտածողության զարգացմանը զուգընթաց՝ բառապաշարի, բառակազմության, շարահյուսության ու լեզվամտածողության ձևերի համընդհանուր ոչ միայն նորակազմությունների, այլև փոխառությունների միջոցով և հնացած ու օտարամուտ տարրերի արտամղում ու դրանց փոխարինում սեփական միջոցներով:

Այս երկու միտումները մեր լեզվի տարբեր մակարդակներում գործում են տարբեր չափերով և ուժգնությամբ:

Հայերենի հնչյունային համակարգը, լինելով կոտ և ճկուն, բավական կայուն է օտարամուտ տարրերի ներթափանցման նկատմամբ, ուստի օտար ազդեցությունների հետևանքները սահմանափակվում են մասնակի երևույթներով, սրանք էլ հազվադեպ են հասնում գրական լեզվի մակարդակին:

Միջնադարում հայերենը հարևան լեզուների ազդեցությամբ յուրացրել է **ֆ** հնչյունը: Յուրացման այդ գործընթացը գրական լեզվում ավարտված է, սակայն բացակայում է կամ չի ավարտվել որոշ բարբառներում (**Թիֆլիսի**, **Ղարաբաղի**, **Ուրմիայի**, **Մեղրու**, **Գորիսի**, **Հաղրուծի** և այլն), ուր **ֆ**-ի փոխարեն դեռևս հանդես է գալիս **փ**-ն: Այդ բարբառների կրողները գրական-խոսակցական լեզուն յուրացնելիս հաճախ թույլ են տալիս **փ**-ի և **ֆ**-ի շփոթություն՝ **ֆ**-ի փոխարեն հնչելով **փ** (*կամփետ*, *Արթիկ տուփ*, *սփաթ*, *քեփ*, *կոփե*, *Թիփլիզ*) և, ընդհակառակը, ճիշտ խոսելու ձգտման մեջ չափից ավելի ճիգ գործադրելով՝ **ֆ**-ով են փոխարինում **փ**-ն նաև անհարկի դեպքերում (*Արֆիկ*, *մի տուֆ կարագ*, *թաֆանցիկ*, *շերեֆ*): Պետք է նկատել, որ **ֆ** հնչյունը գրական հայերենում գոյություն ունի գրեթե միայն փոխառյալ բառերի միջոցով²:

Ժամանակակից արևելահայերենում օտար ազդեցությունների հետևանքով ներկայումս նկատվում է որոշ հնչյունների քմայնացում: Մասնավորապես,

¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը, «Լրաբեր հաս. գիտ.», 1971, հ. 9, է. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978, Բ. Իշխանյան, Ակնարկներ հայերենի տերմինաշինության, Եր., 1981, Հ. Բարսեղյան, Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 1988, «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր», հ. 1, 2, 3, Եր., 1976, 1987, 1988:

² Ծագումնաբանորեն և տիպաբանորեն այլ երևույթ է որոշ բարբառներում (Արարատյան, Կարնո, Սեբաստիայի, Արարկիրի, Ակնի, Նոր Նախիջևանի և այլն) կամ գրական լեզվում հնչյունափոխությամբ առաջ եկած **ֆ** հնչյունը բառակրթի **հ**-ի փոխարեն՝ օ-ից առաջ (*ֆօղ*, *ֆօտ*, *ֆօրթ*, *ֆօքի* և այլն) կամ **վ**-ի խլացմամբ (*ուժօֆցունէլ* [Պոլիս], *հարաֆ*, *աֆտօ*, *փըլաֆ*, *նաֆթ*, *հաֆսար*, *հաֆք* [Կարնո] և այլն), **փ**-ի շփականացմամբ (*դափ* < *դիֆ* [վան] և այլն):

նուսերենի ազդեցությամբ առաջին շարքի ձայնավորներից և յ-ից առաջ քմայնանում են *ղ, տ, թ* բաղաձայնները հատկապես փոխառյալ բառերում (*իհնծիտուտ, ձիայեկծիկա, ձիռեկտոր, միծինգ, արձիական, Միզրան*): Այս երևույթը, սակայն, մնում է խոսակցական լեզվի մակարդակում: Իսկ գրական լեզուն դիմադրում է այդ օտար ազդեցությանը:

Գոյություն ունի տեսակետ³, ըստ որի՝ գրական արևելահայերենին ենթակայումս մասամբ հատուկ է յ-ից առաջ *ղ, տ, թ*-ի քմայնացումը (*մատյան, արդյոք, ընկերություն, ապարդյուն, դաստիարակել, առավոտյան* և այլն), որն ունի դիրքային-արտաբերական նշանակություն և չի կարելի բացատրել միայն օտար ազդեցություններով: Վերջինս նպաստում է դրա կայունացմանը⁴:

Օտար ազդեցությունը մասամբ նպաստում է նաև գաղտնավանկ *ը-ի* թուլացմանը մի շարք դեպքերում և մանավանդ բառակազմի «շփական+պայթական» կապակցությունից առաջ (*սկիզբ, զբաղվել, շտապել* և այլն): Ընդ որում, դա պետք է համարել առավելապես ռուսերենի ազդեցություն, քանի որ արևմտահայերենը, շփվելով եվրոպական և ասիական այլ լեզուների հետ, պահպանում է գաղտնավանկ *ը-ի* ուժեղ արտասանությունը նույն դիրքերում:

Փոխառյալ բառերի հետ միասին և միայն դրանցով արտահայտվող՝ հայերենում անսովոր վանկերի կառուցվածքների նոր տիպերի՝ մեր լեզուն մուտք գործելը հայերենի համար հնչյունաբանական նոր հատկանիշ չենք համարում, քանի որ դրանք մասնակի երևույթներ են, համակարգային բնույթ չեն կրում և հաճախ էլ ժամանակավոր են՝ վերանում են արտամղվող օտարաբանությունների հետ միասին:

Հայերենի բառակազմական համակարգը, լինելով հարաբերականորեն կայուն ու պահպանողական, այնուամենայնիվ թույլ է տալիս օտար տարրերի ներթափանցումներ, սակայն հիմնականում ոչ թե արտահայտության, այլ բովանակության դիտվածքում:

Այսպես, տեղի է ունենում միայն հասկացության փոխառում զուտ իմաստային. ազատ թարգմանությունների դեպքում: Օրինակ՝ *օղաշու* (лётчик «սավառորդ», ֆր. pilote < ֆուն. pedotes «ղեկորդ»), *հանդես* (журнал < ֆր. journal «օրական»), *հարցազրույց* (интервью < անգլ. interview «փոխդիտում, փոխհանդիպում»), *զբոսարշավ* (экскурсия < լատ. excursio «արտընթացք, արտագնացություն»), *զբոսախնջույք* (пикник < ֆր. pique-nique «թեթևսովիկ մարդ»), *երածշտանոց* (консерватория < լատ. conservatorio «պահպանարան»), *ձախնայնակ* (грампластинка «գրաթիթեղիկ»), *խոսքաշար* (контекст «համաշարադրանք» < լատ. contextus «խիտ հյուսվածք»), *հրասայլ* (танк < անգլ. tank «պահանոթ»), *ազեվազ* (кенгуру < անգլ. Kangaroo [ալստրալական տեղանուն]), *մորաստան* (тундра < ֆին. tunturi «լերկ բարձունք»), *բնանկար* (пейзаж < ֆր. paysage «երկրային, գյուղական»), *փակուղի* (тупик «բութակ»), սուրճ (кофе < արաբ. qahwa < Կաֆֆա [արաբական տեղանուն]): Նման դեպքերում փոխառությունների մասին կարելի է խոսել խիստ վերապահումով, քանի որ հասկացությունների ներթափանցումը ոչ այնքան լեզվական, որքան ընդհանրապես մշակութային - իմացաբանական նշանակություն ունի:

³ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 121, Թ. Ղարազյույան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974, էջ 218:

⁴ Հայերենի բարբառներին բնորոշ է հետնալեզվային տարբերակների (Ջելթունի, Քեսաբի, Խարբերդի, Եղեսիայի, Վանի, Օստախի, Մոկսի, Արարատյան, Մեղրու, Ագուլիսի, Ղարաբաղի, Խոյի, Ուրմիայի և այլն) և/կամ ձայնավորների (Սեբաստիայի, Արաբկիրի, Ալանի, Չելթունի, Մարաշի, Քեսաբի, Արճեշի, Վանի, Օստախի, Մոկսի, Ոգմի, Մեղրու, Ագուլիսի, Ղարաբաղի, Խոյի, Ուրմիայի և այլն) քմայնացում (ոչ փոխառյալ), որը համակարգային բնույթ ունի և դժվար է բացատրել միայն օտար ազդեցություններով:

Տեղի է ունենում հասկացության և ստուգաբանական իմաստի (բնիմաստի) փոխառում ստուգաբանական թարգմանությունների դեպքում: Օրինակ՝ *հերթափոխ* (смена), *համույթ* (ансамбль), *զրոսաշրջիկ* (турист), *լիազումար* (пленум), *թուղվածողով* (летучка), *մակնիշ* (марка), *մերձակետ* (перигей, периселена), *հեռակետ* (апогей, апоселена), *գործակալ* (агент), *ձայնաշար*, *գունաշար* (гамма), *մատենագիշ* (լատ. ex libris «գրքերից»), *երգահան* (композитор «ստեղծագործող»): Նման դեպքերում փոխառությունը վերաբերում է միայն բովանդակության դիտվածքին:

Տեղի է ունենում հասկացության, բնիմաստի և ստուգաբանական ձևի փոխառում կառուցվածքային թարգմանությունների դեպքում, այսինքն՝ երբ կատարվում է բառի պատճենում ըստ բնօրինակի ստուգաբանական ձևի, բառակազմական կառուցվածքի, սակայն բառակազմական սեփական կաղապարով և միջոցներով: Օրինակ՝ *լուծարք* (ликвидация), *հնգամարտ* (пятиборье), *մենակատար* (солист), *նվագարկիշ* (проигрыватель): Նման դեպքերում առկա է արտահայտության դիտվածքին պատկանող տարրի՝ կառուցվածքային ձևի փոխառություն, սակայն լեզվական ատաղձը սեփական է: Սեփական են նաև բառակազմական կաղապարը և լեզվամտածողությունը:

Տեղի է ունենում հասկացության, բնիմաստի, ստուգաբանական ձևի և բառակազմական կաղապարի փոխառում կաղապարային թարգմանությունների դեպքում, երբ կատարվում է բառի պատճենում ըստ բնօրինակի ստուգաբանական ձևի, բառակազմական կառուցվածքի և կաղապարի, սակայն սեփական լեզվամտածողությամբ և միջոցներով: Օրինակ՝ *մատենագիտություն* (библиография), *ընդհատակյա* (подпольный), *փոշեկուլ* (пылесос), *հնքնագնաց* (самокат): Նման դեպքերում առկա է արտահայտության դիտվածքին պատկանող տարրերի՝ ստուգաբանական ձևի և բառակազմական կաղապարի փոխառություն, սակայն լեզվական ատաղձը, ինչպես նաև լեզվամտածողության ձևը սեփական են:

Տեղի է ունենում հասկացության, բնիմաստի, ստուգաբանական ձևի, բառակազմական կաղապարի և լեզվամտածողական ձևի փոխառում լրիվ պատճենման դեպքում, այսինքն՝ երբ բնօրինակի համեմատ սեփական է միայն լեզվական ատաղձը: Օրինակ՝ *հնգամյակ* (пятилетка), *հավակնորդ* (претендент <լատ. praetendentis>), *գեղագրական* (живописная), *հնքնաթիռ* (самолёт), *հնքնաթիփ* (самосвал), *գլիդոն* (каток): Նման դեպքերում լեզվական ատաղձը, որ սեփական է, վերջին հաշվով ամենակարևորն է ու վճռորոշը:

Տեղի է ունենում բառերի գործառական նշանակության ընդօրինակում, գործառական ոլորտների պատճենում, այսինքն՝ երբ բնօրինակի պես սեփական բառն էլ ենթարկվում է իմաստի ընդլայնման և ստանում գործառական նոր նշանակություններ: Օրինակ՝ *քառյակ* - квартал (երաժշտական ժանր և համույթ), *համերգ* - концерт (երաժշտական ժանր և նվագահանդես), *բաղադրատոմս* - рецепт (դեղատոմս և թխվածքների բաղադրագիր), *պատուհան* - окно (լուսամուտ, ազատ ժամանակահատված և բաց արանք, ճեղք), *գլխարկ* - шапка (գլխի ծածկոց և, օրինակ, Մարսի բևեռների սառցե ծածկոցը): Այսպիսի դեպքերում էլ լեզվական ատաղձը սեփական է:

Որոշ դեպքերում էլ տեղի է ունենում մասնակի թարգմանություն, այսինքն՝ բաղադրյալ կազմության որոշ տարրեր թարգմանվում են, փոխարինվում սեփական միջոցներով, իսկ որոշ տարրեր ուղղակիորեն փոխ են առնվում այլ լեզուներից: Օրինակ՝ *ջերմաէլեկտրակայան* (теплоэлектростанция), *հակասովետիզմ* (антисоветизм), *ռադիոկայան* (радиостанция), *կինոդիտում* (киносмотр), *գազամուղ* (газопровод), *իդեալականացում* (идеализация): Լեզվական ատաղձի տեսակետից սրանք միջին տեղն են գրավում փոխառության և լրիվ պատճենման միջև:

Վերջապես, գալիս են լրիվ փոխառությունները, երբ փոխառյալ է բառն ամբողջությամբ, իր բոլոր տարրերով հանդերձ: Օրինակ՝ *իդեալ*, *կոդիֆիկա-*

ցիա, էսենցիա, բիսկվիտ, կապիտալիզմ: Սակայն լրիվ փոխառությունն էլ հարաբերական է: Բացարձակ ամբողջական փոխառությունն այն է, երբ պահպանվում են բնօրինակ ձևի հնչյությանը կազմը (գրային կազմը) և հնչյունական կերպարանքը: Բայց հատկապես վերջինը տեղի է ունենում միայն բանավոր խոսքում (օրինակ՝ *Մասկվա, ինստիտուտ*):

Հաճախ բնօրինակ ձևի գրությունը և արտասանությունը չեն համընկնում, պահպանվում է մեկն ու մեկը (հնչադարձություն կամ գրադարձություն): Երկուսն էլ պահպանվում են միայն այն դեպքում, երբ փոխատու և փոխառնող լեզուների գրային համակարգերը (այբուբենները) նույնն են (օրինակ՝ անգլերենը, ֆրանսերենը, իտալերենը և այլն). գրվում է փոխատու լեզվի ձևով և արտաբերվում բնօրինակի պես:

Հայերենում ընդունված է հնչադարձությունը՝ գրադարձության որոշ տարրերով (*Այգենհատեր, Այնջբայն, Մոսկվա*): Ռուսերենում ընդունված է գրադարձությունը՝ հնչադարձության որոշ տարրերով (*Эйзенхауэр, Эйштейн, Лондон*):

Փոխառությունների այս բոլոր տարատեսակները հավասար չափով չեն ենթակա արտամղման միտմանը: Սրանցից շատերը, շնորհիվ լեզվական սեփական առաղծի, հայերենի միջոցներով ձևավորված արտաքին պատյանի, լեզվում սովորաբար չեն ընդգծվում իբրև օտարաբանություններ և քիչ են ենթակա արտամղման միտմանը: Միայն մասնակի դեպքերում, երբ հայտնվում է տվյալ պատճենի ավելի ազատ թարգմանված տարբերակը, ապա բնօրինակին առավել մոտ պատճենը արտամղվում է լեզվից: Օրինակ, *Ճայնակավառակ*-ը՝ իբրև *դիսկ*-ի պատճենում, դուրս է մղվել *Ճայնապնակ*-ի կողմից, *համաշարադրանք*-ը (կոնտեքստ)՝ *խոսքաշար*-ի կողմից, *երկնամերձ*-ն ու *լուսնամերձ*-ը (պերիգել, պերիսելենա)՝ *մերձակետ*-ի կողմից, *ապրանքանիշ*-ը (մարկա)՝ *մակնիշ*-ի կողմից, *Ճայնատարողություն*-ը (դիապազոն)՝ *Ճայնծավալ*-ի կողմից և այլն:

Արտամղման միտմանը ամենից ավելի ենթակա են մասնակի թարգմանությունները և մանավանդ լրիվ փոխառությունները:

Նշված բոլոր դեպքերում, սակայն, հազվադեպ է լինում արտահայտության դիտվածքի տարրերի՝ բառակազմական կաղապարների, ածանցների համակարգային փոխառություն: Այդ հազվադեպ օրինակներից են հայերենի համար նոր մի քանի բառակազմական կաղապարներ, ինչպես՝ համադրական-համադասական բարդությունները (*գիտահետազոտական, դրամաիրաչին, ուսումնասիրտադրական*), կիսահարադրական-համադասական բարդությունները (*ցուցահանդես-վաճառք, աղբյուր-հուշարձան, խրճիթ-ընթերցարան*), հապավումները՝ իբրև բարդության մի տեսակ⁵, ինչպես նաև մի քանի ածանցներ, այն էլ՝ խիստ վերապահությամբ առնված:

Օտարամուտ ածանցների մասին պետք է ասել հետևյալը: Ծիշտ է, *-իզմ, -իստ, -չի* և մի քանի այլ ածանցներ, շնորհիվ դրանցով կազմված փոխառյալ բառերի առատության, հայերենում այսօր սուուգաբանվում են և ըմբռնվում իբրև ածանցներ, սակայն կենսունակ չեն և հայերեն արմատների ու բառերի վրա սովորաբար չեն դրվում: Կան մի քանի օրինակներ միայն (*դաշնակիզմ, թելնիկ, ջերմաֆիկացում, հեռախոսաֆիկացում, համալսարանիադա, նախըջի, խոպանչի, փոնչի*), որոնք ավելի շատ մասնակի թարգմանություններ են: *Երևանիտ, նաիրիտ, սևանիտ, լորենիտ* և նման կազմությունները զուտ պայմանական անվանումներ են, նեղ մասնագիտական եզրեր, ընդ որում՝ մեծ մասամբ կազմված են հատուկ անուններից, թեկուզ և հայկական:

-իստ ածանցը կազմում է մի շարք բաղադրություններ հայկական արմատ-

⁵ Ավելի մանրամասն տե՛ս «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Եր., 1973, Ա. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990:

ներից (*ձևիստ, թեյիստ, խաշիստ, արշավիստ, դուդուկիստ, թառիստ*), որոնք մեծ մասամբ խոսակցական-ծարգոնային ձևեր են և գրական լեզվի մակարդակի չեն հասնում: Այդ բանի հաստատումն է *նկարչիստ* կատակ բառը, որը ստեղծվել է հեզգելու համար օտարաբան լեզվամտածողություն ունեցողների խոսքը (ռաբիսը, որ փորձում է ընդօրինակել քաղքենիական խոսքը և փողոցային-երիտասարդական ծարգոնը, գործածում է այս բառը՝ իբրև «գերհիշտ» ձև. «*Քո՛ւր քան, դու նկարչիստ ե՛ս*»):

Հայերենի ձևաբանական համակարգը առավել կայուն է օտար ազդեցությունների նկատմամբ: Օտարամուտ տարրերը գրեթե բացառվում են: Միայն երբեմն ժամանակային, եղանակային, հոլովական որոշ ձևեր կարող են ստանալ կիրառության նոր նրբիմաստներ, ընդլայնել իրենց գործառական ոլորտը, ինչպես, օրինակ, ժխտականով ձևավորված հարցը՝ իբրև խնդրանքի մեղմասական ձև, որ կա և՛ հայերենում, և՛ այլ լեզուներում (*«Զե՛ք ասի՛ ժամը քանիսն է»*) և սրա առավել մեղմասական տարբերակը, որ ձևավորվում է հատկապես պայմանական անցյալի ժխտականով (*«Զե՛հ՞ք ասի՛ ժամը քանիսն է»*): Իհարկե, դժվար է ասել՝ սա լեզվական փոխազդեցությա՞ն արդյունք է, թե՞ լեզվական հանրույթ է: Սակայն պարզ է, որ այս կարգի ներթափանցումները լեզվից լեզու սկզբունքորեն հնարավոր են:

Ծարահյուսական փոխառությունները նույնպես հիմնականում հանգում են կադապարներին, խնդրառական ու լեզվամտածողական ձևերին: Դրանց մի մասը հայերենի շարահյուսական ընդհանուր օրինաչափություններին հակասելու, լեզվական կանոնին անհարիր լինելու հետևանքով ընդգծվում է իբրև անհարթություններ, օտարաբանություններ: Օրինակ. *Տրպեսզի առողջ լինել, պետք է աղ քիչ գործածել: Նա պատրաստվում է նվազել ջրթակի վրա: Բանը նրանումն է, որ...: Հարցը կայանում է նրանում, որ...: Նա իր մոտ է: Նա հանգրստանում է Մոսկվայի տակ: Երևանը դա Հայաստանի մայրաքաղաքն է: Երևանը հանդիսանում է Հայաստանի մայրաքաղաքը:*

Ծարահյուսական փոխառությունների մյուս մասը լեզուն հիմնովին յուրացնում է, և դրանք անգամ չեն ընկալվում իբրև օտարամուտ տարրեր: Օրինակ՝ *ԱՄՆ-ում Լեհաստանի դեսպանը, փոքր չափի առարկաներ, պետությանը մսի, կաթի վաճառք, դժբախտ պատահարներից ապահովագրություն, ստացվում է, որ... , բանն այն է, որ... և այլն: Ընդ որում, հաճախ դժվար է անգամ որոշել փոխառության ակունքը և նույնիսկ այն, թե տվյալ դեպքում ունենք փոխառությո՞ւն, թե՞ անկախ կազմություն: Խնդիրն այն է, որ եթե ազդեցությամբ կամ ինքնուրույնաբար առաջ են եկել մտածողական ինչ-ինչ ձևեր, ապա դրանց համապատասխան լեզվական-շարահյուսական ձևերի ստեղծումը կամ փոխառությունը անխուսափելի է, որքան էլ դրա դեմ պայքար մղվի: Կարևորն այն է, որ այս դեպքում ևս լեզվական ատաղձը հայերենն է:*

Փոխառությունների ու նորակազմությունների շրջանառությունն ամենից արագ է բառապաշարում: Մի կողմից՝ հայերենի բառապաշարը համարվում է նորանոր գիտական եզրերով, որոնց մեծ մասը պարզապես ժամանակ չի լինում ամմիչապես թարգմանելու, մյուս կողմից՝ փոխառյալ և հաճախ լեզվում վաղուց ամրապնդված շատ ու շատ բառեր, եզրեր աստիճանաբար դուրս են մղվում և փոխարինվում սեփական նորակազմություններով: Ընդ որում, հայերենի բառապաշարից օտարաբանությունների արտամղման այս գործընթացն ունի արագացող բնույթ. որքան ավելի շատ օտարաբանություններ են արտամղվում ու փոխարինվում հայերեն նորակազմություններով, այնքան ավելի մեծ թվով փոխառություններ են սկսում ընկալվել իբրև օտարաբանություններ և ենթակա դառնում արտամղման միտմանը: Լեզվական գործընթացը պայմանավորում է որոշակի լեզվական ճաշակ, վերջինս էլ իր հերթին արագացնում է գործընթացը: Եղթայական հակաազդեցության սկզբունքով՝ արտամղվելու ենթակա օտարաբանությունների թիվը մեծանում է այդ արտամղմանը զուգընթաց: Լեզուն որքան մաքրվում է, այնքան մեծանում է նրա համասեռության չա-

փը, այնքան մա ավելի անհանդուրժող է դառնում օտարամուտ տարրերի նկատմամբ:

Այս հարցում լեզուներն իրենց զարգացման ընթացքում գնում են տարբեր ուղիներով, և դա ավանդույթի հարց է: Որոշ աշխարհակալ լեզուների համար սովորական է դարձել օտար ներթափանցումներից չխուսափելը, անսահմանափակ թվով փոխառություններ կատարելը (ռուսերեն, անգլերեն), քանի որ նրանց համար փոխառությունն կատարելն այլևս վտանգավոր չէ:

Ուրիշ լեզուներ խուսափում են փոխառություններից: Ընդ որում, եթե որոշ դեպքերում դա կապված է լեզվական համակարգի յուրահատկության հետ (չինարեն), ապա այլ դեպքերում դա ավելի շատ ավանդույթի հարց է, քանի որ լեզվական համակարգի ճկունությունը թույլ է տալիս անթիվ փոխառություններ կատարել (հայերեն):

Այս կամ այն ուղու ընտրությունը պայմանավորում է մակ լեզուների զարգացման հետագա ընթացքը, դառնում ճակատագիր, և այդ ուղու հետագա փոփոխությունը դառնում է դժվար (ռուսերեն): Ավանդույթը ավանդույթ է բերում: Ավանդույթն ունի ինքնամտապնդման, ինքնախորացման, հույության (իներցիայի) հատկություն: Այդ բանն այսօր պարզորոշ նկատվում է հայերենում: Այն, ինչ երեկ թվում էր անխուսափելի ու անհրաժեշտ փոխառություն, այսօր ընկալվում է իբրև օտարաբանություն, հայտնվում են նրա հայերեն համարժեքները, իսկ վաղը այն կարող է արդեն բոլորովին արտանվել: Բառեր, որ ժամանակին ամենայն «գիտականությանը» հիմնավորվել են իբրև անթարգմանելի փոխառություններ, ժամանակի ընթացքում այնուամենայնիվ հայացվում են:

Ներկայումս հայերենի բառապաշարում փոխառությունների բացարձակ թիվն աճում է, սակայն դրանք հարաբերականորեն նվազում են, քանի որ սեփական նորակազմությունների թիվն ավելի արագ է աճում: Սովորաբար փոխ են առնվում մասնագիտական եզրերը և որոշ կարգի նորաձև կենցաղային բառեր: Իսկ հայերեն են դառնում բառապաշարի առավել մնայուն, համակիրարկ ու հաճախական միավորները: Ահա թե ինչու որոշ բառեր, սկզբնապես սահմանափակ գործածություն ունենալով, պատրաստի վերցվում են այլ լեզուներից, սակայն հետագայում լայն տարածում ստանալով՝ անհրաժեշտաբար փոխարինվում են հայերեն համարժեքներով: Օրինակ՝ *մագնիտոֆոն*-ը փոխարինվեց *ձայնագրիչ*-ով, *բաղմինտոն*-ը՝ *փետրագնդակ*-ով, *տրամպլին*-ը՝ *ոստնակ*-ով, *ունիվերսալ*-ը՝ *հանրախանութ*-ով, *սոցիոլոգիստիկա*-ն՝ *հանրալեզվաբանություն*-ով, *իլեքանա*-ն՝ *ծաղկահարդարում*-ով և այլն:

Օտարաբանությունների արտամիջան միտումը լեզուների զարգացման տարբեր շրջաններում արտահայտվում է տարբեր ուժգնությամբ: Սովորաբար այն սերտորեն կապված է ինձում լեզվի գրական կանոնարկման գործընթացի հետ՝ իբրև նրա մի կողմ: Այն պայմանավորված է ինձում մակ արտալեզվական և մանավանդ հասարակական-քաղաքական մի շարք երևույթներով:

Օտարաբանությունների արտամիջան միտումն ամենից ուժեղ արտահայտվել է նոր գրական հայերենի կազմավորման ընթացքում և առավել ուժգնությամբ շարունակում է գործել այսօր: Աշխարհաբարը ձևավորվելիս անցել է անթիվ-անհամար օտարաբանությունների հաղթահարման, արտամիջան դժվարին ճանապարհը՝ հասնելով զարմանալի մաքրության: Օրինակ, բազմաթիվ թուրքական փոխառություններից այսօրվա գրական լեզվում մնացել են մեկ-երկու տասնյակը, խոսակցական լեզվում՝ հազիվ մի քանի տասնյակը, որոնք էլ դեռևս շարունակում են արտամիջան: Նույն կերպ՝ բուն ռուսական փոխառությունները, որ մեծ թիվ են կազմում որոշ բարբառներում, իսկ գրական լեզվում նույնիսկ ավելի քիչ են, քան թուրքականները, չմայած ռուսերենի ազդեցությունը այսօր էլ շարունակվում է:

Մի քանի խոսք էլ՝ օտարաբանությունների գնահատման մասին: Օտարաբանությունները տարբեր նշանակություն ու կշիռ ունեն գրական և խոսակցական լեզուներում: Գրական լեզվում դրանք պարզապես անհարթություններ

են, համակարգը խախտող տարրեր: Խոսակցական լեզվում դրանք ունեն ոճավորման նպատակ և խոսքին տալիս են ժարգոնային երանգ: Օտարաբանությունների և սեփական կազմությունների համեմատությունը ցույց է տալիս հետևյալը: Սեփական կազմությունները սովորաբար լինում են չեզոք, մինչդեռ դրանց համապատասխան օտարաբանություններն ունենում են հավելյալ եղանակային իմաստներ, որի համար էլ ժարգոնային բառերի պես օգտագործվում են խոսքը ոճավորելու նպատակով: Իսկ ինչ բան են ժարգոնները, եթե ոչ սովորական, առօրյա, ընդհանուր, չեզոք լեզվից տարբերվելու ձգտման արտահայտություններ:

Օտարաբանությունների՝ ժարգոնային կիրառությանը նպաստում է նաև դրանց հասարակական հեղինակությունը՝ կապված համապատասխան փոխատու լեզուների նույնատիպ հեղինակության հետ: Ահա թե ինչու են բարբառներում և խոսակցական լեզուներում այդքան տարածվում օտարաբանությունները:

Օտարաբանությունների ժարգոնային կիրառության երևույթներ նկատվում են նաև գրական լեզվում: Դրանք հիմնականում կապվում են մասնագիտական եզրերով ու արտահայտություններով ձևավորվող մասնագիտական ժարգոնների հետ, ինչպես նաև՝ ընդհանրապես խոսքի ոճավորման ձգտման հետ:

Օտարաբանությունների ոճական արժեքը ցույց տալու համար համեմատենք համարժեք բառերի հետևյալ գույգերը. *էքսպանսիա* - տարածում, *ինֆանտիլիզմ* - մանկամտություն, *լիկվիդացիա* - լուծարք, *մաքսիմալ* - առավելագույն, *պեյզաժ* - բնանկար, *դիրիժոր* - խմբավար, *մանետրո* - վարպետ, *մոդեռն* - արդիական և այլն: Սրանցից երկրորդները՝ հայերեն ձևերը, չեզոք են, իսկ առաջինները՝ օտար ձևերը, ոճականորեն նշույթավորված են:

Այսպիսով, արտամղվող օտարաբանությունները հաճախ վեր են ածվում մասնագիտական և այլ կարգի ժարգոնների տարրերի և շարունակվում են օգտագործվել խոսակցական լեզվում իբրև խոսքի ոճավորման միջոցներ: Ահա թե ինչու գրական լեզու ներթափանցած օտարաբանությունների հանդեպ անհանդուրժողականությունը տեղին չէ խոսակցական լեզվի նույնատիպ երևույթների նկատմամբ:

Խոսողները սովորաբար գիտակցում են օտարաբանությունները և խոսակցականից գրականին, բանավոր խոսքից գրավորին անցնելիս ձգտում են խուսափել դրանցից: Մեր կատարած փորձերից մեկի ժամանակ այդ բանը շատ ակնհայտ երևաց: Երբ հարցվողներին ցույց էին տրվում նկարներ, և պահանջվում էր ասել դրանցում պատկերված առարկաների անունները, բոլորն էլ ասում էին միայն հայերեն ձևերը՝ *բահ*, *դոյլ*, *գուլպա*, *սահնակ*, *վարունգ*, իսկ դրանք չիմանալու դեպքում ասում էին օտար ձևերը՝ հատուկ զգուշացնելուց հետո միայն (*«Սրա հայերենը չեմ հիշում», «Սրան մենք այսպես ենք ասում...»*): Նման խոսքային վարքը հայտանիշն է այն բանի, որ գոյություն ունի ոչ միայն լեզվական համակարգի դիմադրություն օտարաբանությունների ներթափանցման նկատմամբ, այլև լեզվական հանրության դիմադրություն, որ առաջինի գիտակցման և կիրառման արդյունք է: Դա նշանակում է նաև, որ այդ օտարաբանությունները խոսակցական լեզվում իրոք ոճավորման միջոց են: Վերջապես, նշանակում է, որ լեզվում տեղի է ունենում օտարաբանությունների արտամղում:

Արձանագրելով օտարաբանությունների արտամղման միտումը հայերենում՝ պետք է նկատել, որ ինչպես դրանում, այնպես էլ փոխառությունների նկատմամբ դիմադրության հարցում առկա է երկու գործոն՝ առարկայական և անձնական: Առարկայական են լեզվական համակարգի դիմադրությունը և լեզվական հանրության ենթագիտակցական դիմադրությունը: Անձնական է դրանց հիման վրա առաջացող՝ լեզվական հանրության գիտակցական դիմադրությունը: Եթե վերջինս ստանում է որոշակի կազմակերպվածություն, ապա դառնում է ընդհանուր լեզվաքաղաքականության բաղադրիչ:

Լեզվաքաղաքականությունը, բնականաբար, ունենում է որոշակի չափանիշներ, որոնցով առաջնորդվում է լեզվական տարերային գործընթացին մի-

ջամտելիս: Ժամանակակից արևելահայերենի դեպքում կիրառվող լեզվաքաղաքականությունը պահանջում է հրաժարվելով փոխառությունների բացարձակ ու անվերապահ մերժման գործելակերպից՝ ելնել ընդհանուր նպատակահարմարության սկզբունքից: Ըստ այսմ՝ հանդուրժելի են պատճենումներն ու այլ կարգի մասնակի փոխառությունները (ստուգաբանական ձևի, լեզվամտածողական ձևի, կաղապարների), ինչպես նաև ընդօրինակումները (օրինակ՝ հունարենի նմանությամբ մի շարք նախածանցների ստեղծումը հունաբան դրպրոցի կողմից):

Սա նշանակում է, որ լեզվի մաքրության, օտարաբանությունների արտամղման տեսակետից առաջնայինը, վճռորոշը լեզվական ատաղձն է: Այնուհետև գալիս են լեզվական արտահայտչության ձևերը (կաղապարներ, կառուցվածքային ձև), հետո՝ մտածողական ձևերը և, վերջապես, բովանդակության դիտվածքի ատաղձը՝ հասկացություններն ու իմաստները:

Այսպիսով, մերժելի են հատկապես այն փոխառությունները, որոնք վերաբերում են լեզվական ատաղձին, և որոնք հակասում են հայերենի զարգացման ընդհանուր օրինաչափություններին: Մնացած դեպքերում օտարամուտ տարրերի դեմ պայքարը սկզբունքային նշանակություն ունենալ չի կարող և մեծ մասմբ անօգուտ է:

Այսպիսի չափանիշներով առաջնորդվելը կարևոր է լեզվաքաղաքականության մեջ սխալներ թույլ չտալու համար: Այդպիսի սխալի ամենահայտնի օրինակն է 1940 թ. *կուսակցություն, խորհուրդ, հանրապետություն, հեղափոխություն, նստաշրջան, պատգամավոր, սահմանադրություն* բառերի օրենսդրական փոխարինումը այսպես կոչված «միջազգային տերմիններով»: Օտար բառերի այդ չհիմնավորված ներմուծման դեմ ծավալված համար պայքարը, որ պսակվեց հաջողությամբ, ցույց է տալիս, թե որքան ուժեղ է վերոհիշյալ միտումը և ինչպես է այն արտահայտվում թե՛ առարկայորեն, թե՛ անձնաբար:

Օ. Լ. ЗАКАРЯН - Тенденция к вытеснению варваризмов в армянском языке. - Гомогенность и гетерогенность - существенные характеристики систематизированных структур. Они являются категориями, изменяющимися в пространстве и времени. В процессе развития языков на разных уровнях и фрагментах их структуры, а также в территориальных и функциональных вариантах могут доминировать тенденции либо к гомогенности, либо к гетерогенности.

Вызывающий гетерогенность в языке слой бывает имманентным (нерегулярности, исключения и отклонения, уникальные и непродуктивные парадигмы, одиночные окаменелые формы, возникшие в ходе развития системы по её внутренним закономерностям) и приобретенным (чужеродные элементы, заимствованные или проникшие в систему при взаимодействии с другими системами).

Имманентный гетерогенный слой может быть остаточным (унаследованным из предшествующих периодов развития языка) и зачаточным (относящимся к предстоящему периоду развития языка).

Приобретенный гомогенный слой может быть внутренним (проникшим из других территориальных и функциональных вариантов языка) и внешним (проникшим из других языков). Этот слой, благодаря тенденции к гомогенности, может преодолеваться или освоиться (приспособиться к системе и не восприниматься как гетерогенным).

В статье тенденция гомогенности рассматривается в фонологической, словообразовательной, морфологической и синтаксической системах и в лексике литературного армянского языка. На конкретных фактах демонстрируются основные направления возникновения и изменения гетерогенных слоев, в частности варваризмов, в разные периоды развития литературного армянского языка. Подтверждается мысль, что в литературном армянском языке обычно доминировала тенденция к гомогенности, которая действовала против как имманентной, так и приобретенной (в особенности внешней) гетерогенности.